ՅՕԴ. 25.—Արհեստանոցի աշակերտաց մէջ եթէ գտնուին ալնպիսիք, որ դերազանց արհեստի ընդունակութիւն ցոյց տան ու ապագայ խոստանան, Հոգաբարձութիւնը կը յանձնարէ անոնց անունը Պատրիարքարանի, որ զանոնք կը ղրկէ ուր որ անկ է, կատարելագործելու համար իրենց արհեստն, եթէ նիւթական միջոցները ներեն։

ՅՕԴ. 26.—Հոգաբարձութիւնք կը պարտաւորին ուսումնասիրել այն միջոցներն, որոնցմով հնարին կրնալ լինիլ գիւղացի ժողովրդեան երկրագործական աշխատութիւններն արդիւնաւորել և հողին տեսակին ու կլիմային համաձայն՝ շահաւէտ բերքերու մշակութիւնը քաջալերել. որպիսիք են, ափիոն, բամպակ, թթենի (չերամի), շուշմայ, կտաւատ, կանեփ, և ամեն տարի ուրոյն տեղեկագրով մը ներկայացնել Պատրիարքարանի իրենց ուսումնասիրութեան արդիւնքը և տեղւոյն առևտրական գործոց վիճակը, որպէս զի կարելիութեան սահմանին մէջ Պատրիարքարանի կողմէ ընծայուին կարևոր դրութիւններն՝ հողագործական աշխատութեանց արդիւնաւորման համար։

ՅՕԴ. 27.—Այդ նպատակաւ հողագործական վարժութիւնք տեղի պիտի ունենան արհեստանոցներու մէջ, և այն պարագային մէջ երբ յարմարութիւն չգտնուի, տեղւոյն մօտակայ վանքերու հողերն ու արտերն այդ նպատակին պիտի գործածուին՝ յատուկ կարգադրութեամբ։

Նպաստից Յանձնաժողովոյ հետ խորհրդակցութեամբը կազմուած և հրամայուած ի գործադրութիւն։

Պատրիարք Կոստանդնուպոլսոյ
ՄԱՂԱԿԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ի Պատրիարքարանի, 20 Նոյեմբեր 1901.

ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

«Լումայ»-ի անցեալ համարում հաղորդել էինք, որ Սսի մայրավանքում կատարուած ժողովում ձայների առաւելութեամբ Կիլիկիայի Տան Կաթողիկոս ընտրուեցաւ տաճկահայոց եկեղեցականութեան լաւագոյն ներկայացուցիչներից մէկը՝ տ. Գէորգ եպիսկոպոս Երիցեան։

Եւ մինչ ամբողջ ազգը վայրկեան առ վայրկեան սպասում էր լսել նորին սրբազնութեան Հայրապետական օծում ընդունելու ուրախարար լուրը՝ Կ. Պոլսի լրագիրները, ի ցաւ սրտի բոլոր բարեմիտ հայերի, ծանուցին սրբազանի Սսի Ա-

Թուից հրաժարուելը, որի միակ պատճառաբանութիւնը, գէթ պաշտօնական դիմումների ժամանակ, էր որպէս թէ նորա անկարողութիւնը։

Մենք անձամբ ճանաչում ենք սրբազանին, մեզ յայտնի է նորա եռանդը, գործունէութեան փոյթը, շնորհքը, և դըժուարանում ենք հաւատալ որ լոկ միայն անկարողութիւնը լինի պատճառ նորա հրաժարման. անհաւատալի են նոյնպէս Կ. Պօլսի լրագիրների առաջ բերած որպէս թէ «իրաւասութեան» վերաբերեալ խնդիրները որպէս պատճառ այդ հրաժարման։ Մենք կարծում ենք, որ իսկական պատճառը անյայտ մնաց ժողովրդից և ոչ Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետի, ոչ Կ. Պօլսի Ամեն. Պատրիարքի յորդորները և ոչ Ազգիս մեծամեծների թախանձանքները չզօրեցին յետս կոչել տալ այդ հրաժարականը։

Եւ այն ընտրութիւնը, որ երկար տարիների յամառ ջանքերով և ահագին զոհաբերութիւններով գլուխ եկաւ, Կ. Պօլսի խառն ժողովը ստիպուած լինելով բեկանել՝ ինչպէս մեզ հաղորդում են, նշանակել է արդէն նոր ընտրութիւն կատարել։

ԳՕԳՕԼԻ ՄԱՀՈՒԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿ

Այս տարուայ փետրուարի 21-ը նշանաւոր օր էր ռուսաց գրականութեան համար. ամբողջ Ռուսաստանը, Անդրկասպեան երկրից մինչև Սիբիրի խորքերը ոգևորութեամբ յիշեց այդ օրը իւր տաղանդաւոր զաւակներից մէկի մահուան յիսնամեակը։ Գօգօլի անունը այսօր յայտնի է ամեն մի դըպրոցականի. ով չէ կարդացել նորա երգիծաբանութեամբ լի քանքարաւոր գրուածքները, ով չէ տեսել բեմի վրայ նորա «Վերաքննիչը» և կուշտ ծիծաղելու հետ ի միասին սքանչացել այդ բեմական գրուածքի բնական ու կեանքի ճիշտ հայելին ներկայացնող տեսարաններով ու տիպարներով։

Գօգօլը ռուսաց գրականութեան մէջ իրական ուղղութեան հիմնադիրը հանդիսացաւ և մեծ ազդեցութիւն ունեցաւ իրենից յետոյ եկող նշանաւոր ռուս գրողների մտքերի վերայ. նորա գրական ընթացքն այդպիսով յեղափոխիչ նշանակութիւն ունեցաւ ռուս նորածիլ գրականութեան համար և տա-